ՏԱՐԵԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2023

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում:
ՀԿ-ն իր գործունեությունն իրականացնում է ելնելով մարդասիրական սկզբունքներից՝ նպաստելու հասարակության և հատկապես խոցելի խմբերի հիմնախնդիրների կարգավորմանը:

Հայաստան, Երևան 2023թ.

ՏԱՐԵԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Ձեկույցը կազմվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: Ձեկույցի բովանդակության համար պատասխանատու է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ- ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի տեսակետները:

Ձեկույցը կազմեց Շուշան Խնկոյանը
Դիտարկեցին Սերգեյ Գաբրիելյանը, Ալինա Միրզոյանը
Ձևավորեց Լևոն Չիլինգարյանը

Ձգուշացում. Ձեկույցում առկա են բռնության հետքեր պարունակող լուսանկարներ և նկարագրություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նյարդերից թույլ անձանց համար:

Ուղեցույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին:
Բոլոր իրավունքները պահպանված են ©NGNGO 2023թ.
© «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

Norwegian Helsinki Committee

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ NEW GENERATION

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐ 8

ԱՅԼ ՀԻՄՔՈՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔԵՐ 16

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 18

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՌՅԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ 21

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 25

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 29

ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՀԱՄԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Հայաստանի Հանրապետություն

ՀԿ հասարակական կազմակերպություն

ԼԳԲՏԻՔ+ լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինքերսեքս, քվիր

ՍԿԳԻ սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն

ՄԻԵԴ Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՆՍՀԿ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ

Սեռական կողմնորոշում
անձի զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անձի հանդեպ

Գենդերային ինքնություն
անձի իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան պահին վերագրված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անձի նույնականացմանը՝ որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր

Նույնասեռական
անձ, որը զգացմունքային, հուզական, սեռական և այլ տեսակների գրավչությունների ամբողջություն է դրսևորում նույն սեռի անձանց նկատմամբ

Տրանսգենդեր
անձ, որի գենդերային ինքնությունը չի համընկնում ծննդյան պահին վերագրված սեռին

Խտրականություն
Նույն կամ էականորեն նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունք՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքի,

Հոմոֆոբիա
անտրամաբանական և չպատճառաբանված վախ, զզվանք, ատելություն, խտրականություն հոմոսեքսուալ (նույնասեռական) անձանց նկատմամբ, կամ հակազդում հոմոսքեսուալ (նույնասեռական) անձանց վարքին և մշակույթին

Տրանսֆոբիա
անտրամաբանական և չպատճառաբանված վախ, զզվանք, ատելություն, խտրականություն տրանսգենդեր անձանց նկատմամբ, կամ հակազդում տրանսգենդեր անձանց վարքին և մշակույթին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում: Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ելնելով մարդասիրական սկզբունքներից՝ նպաստելու հասարակության և հատկապես խոցելի խմբերի հիմնախնդիրների կարգավորմանը:

ՆՍՀԿ-ի առաքելությունն է խթանել իրավահավասարություն և սոցիալական արդարություն՝ մարդու իրավունքների և շահերի պաշտպանության, առողջապահական ծառայությունների հասանելիության, կարողությունների զարգացման և մարդասիրական աջակցության միջոցով:

Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության ռազմավարական գործունեության շրջանակներում Կազմակերպությունը խոցելի խմբերի, այդ թվում՝ ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ իրավախախտումների վերաբերյալ պարբերաբար հրապարակում է զեկույցներ՝ բարձրաձայնելով առկա խնդիրները և օրենսդրական բացերը, ինչպես նաև իրականացնում է ուսումնասիրություններ և վերլուծություններ, ներկայացնում առաջարկություններ՝ ուղղված հիմնախնդիրների կարգավորմանը և օրենսդրական բարեփոխումների իրականացմանը: Այս ամենին զուգահեռ Կազմակերպությունը շարունակաբար մասնակցում է օրենսդրական նախագծերի քննարկումներին հետևում օրենսդրական բարեփոխումների նախագծերին՝ ներկայացնելով իրավունքակենտրոն առաջարկներ:

Խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության ապահովման համար՝ ՆՍՀԿ-ն տրամադրում է նաև իրավաբանական և փաստաբանական աջակցություն, իրականացնում է ռազմավարական դատավարություն՝ օրենսդրական բարեփոխումների, նախադեպերի ստեղծման, հասարակության իրազեկության բարձրացման նպատակներով:

Սույն զեկույցում ամփոփված են 2023թ.-ին ՆՍՀԿ-ի կողմից տրամադրված իրավախորհրդատվությունները, անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության (ՍԿԳԻ), ինչպես նաև այլ հիմքերով արձանագրված իրավախախտման դեպքերը:

Նշյալ ժամանակահատվածում ՆՍՀԿ-ի կողմից տրամադրվել է թվով 416 իրավաբանական խորհրդատվություն, որից 174-ը ԼԳԲՏԻՔ+ անձանց, 102-ը ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Հայաստան ժամանած անձանց՝ միգրանտ/փախստական/ապաստան հայցողներին, 77-ը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց : Արձանագրվել է ընդհանուրը 94 իրավախախտման դեպք, որից 58-ը ՍԿԳԻ հիմքով: Արձանագրված դեպքերից միայն 21 դեպքով է տրվել ընթացք, իսկ մնացած դեպքերով ընթացք չի տրվել տուժողների համաձայնության բացակայության պատճառով:

2023թ-ի դրությամբ ՆՍՀԿ-ն ունի.

Ներպետական ատյաններում գտնվող	Միջազգային ատյաններում քննվող	Նախաքննության ընթացքում գտնվող
6 գործ	**3** գործ	**3** գործ

Մարդու իրավունքների պաշտպանությունն առավել արդյունավետ և հասանելի դարձնելու նպատակով ՆՍՀԿ-ն նաև իրականացնում է շահերի պաշտպանություն, որի շրջանակներում համագործակցում է պետական/օրենսդրական և միջազգային կազմակերպությունների հետ:

2023թ.-ի ընթացքում ՆՍՀԿ-ն, այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ, վերանայել է մոտ տասնյակ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր և դրանց վերաբերյալ ներկայացրել համապատասխան առաջարկներ:

Միաժամանակ, ՆՍՀԿ-ի նախաձեռնությամբ ներկայացվել են ներքոբերյալ օրենսդրական ակտերի փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ և նախագծեր.

Առողջապահական միասնական «Արմեդ» համակարգ՝ ներկայացվել է ՀՀ Առողջապահության նախարարությանը:

«Հիվանդությունների միջազգային դասակարգիչ»՝ ներկայացվել է ՀՀ Առողջապահության նախարարությանը և ՄՀՀ ՄԻԳ խմբին:

«Գենդերի իրավական նշումի փոփոխման մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ ներկայացվել է ՀՀ Առողջապահության, Արդարադատության և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններին:

2023Թ.-ԻՆ ՆԱՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ՆԱԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ.

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ [1]

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ [1]

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով հանձնաժողով [2]

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ [2]

Մարդու իրավունքների խախտումների, մոնիտորինգի, հետազոտման և փաստաթղթավորման ոչ կառավարական կազմակերպություն (Human rights watch) [3]

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ [3]

ԵՄ-Հայաստան Մարդու իրավունքների 13-րդ երկխոսություն:

[1] https://ngngo.net/2023/12/28/eahk-ngngo-2022/
[2] https://ngngo.net/2023/10/09/united_nations_ngngo_arm/
[3] https://www.hrw.org/world-report/2024/country-chapters/armenia

ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐ

Ստորև ներկայացված են 2023 թվականի ընթացքում ՆՍՀԿ-ի կողմից արձանագրած իրավախախտման առավել հատկանշական դեպքերից մի քանիսը:

Դեպք 1

Դեպքի տեսակը

Ընտանեկան բռնություն

Դեպքի նկարագրություն

Ա.Մ.-ն տարիներ շարունակ ընտանիքի անդամներից թաքցրել է իր սեռական կողմնորոշումը՝ վստահ լինելով, որ ընտանիքը դա չի ընդունի:

Ընտանիքի անդամները անհայտ հանգամանքներում տեղեկացել են Ա.Մ.-ի նույնասեռական լինելու մասին և այդ օրվանից ի վեր փակի տակ են պահել՝ վերջինիս «ուղղելու» նպատակով:

Մի օր Ա.Մ.-ն ինչ-որ պատրվակով կարողացել է սենյակից երկար ժամանակով դուրս գալ, և նրան հաջողվել է ահազանգել ոստիկանություն: Վերջիններս ժամանել են դեպքի վայր և այդ ընթացքում Ա.Մ.-ն կարողացել է տնից փախչել:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Անձը աջակցություն ստանալու նպատակով 2023թ-ի հունվարի 24-ին դիմել է ՆՍՀԿ, և վերջինիս տրամադրվել է ժամանակավոր կացարան և իրավաբանական խորհրդատվություն:

Գործին ընթացք չի տրվել, քանի որ տուժողը չի ցանկացել շարունակել իր ծնողների դեմ բողոքը, իսկ ոստիկանություն ահազանգելու նպատակը եղել է ինչ-որ կերպ տնից փախչելը: Բացի այդ ամենից՝ անձը վստահ է, որ ոստիկանությունը միևնույն է որևէ քայլ չի ձեռնարկի՝ հետագայում ծնողների կողմից բռնությունը կանխարգելելու առնչությամբ:

Դեպք 2

Դեպքի տեսակը

Ատելության խոսք, խտրականություն

Դեպքի նկարագրություն

Շ.Գ.-ն նույնասեռական անձ է: 2023թ-ի փետրվարի 15-ին Երևան քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում զբոսնելու ընթացքում նա անցել է մի քանի ոստիկանների կողքով, որոնք նկատելով Շ.Գ.-ի «տարբերվող» արտաքինը՝ ականջօղերը, վիրավորական արտահայտություններ և հայհոյանքներ են հնչեցրել անձի ուղղությամբ: Շ.Գ.-ն չի կարողացել ոչինչ անել՝ վախենալով հայհոյողների ոստիկան լինելու հանգամանքից:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Շ.Գ.-ն 2023թ-ի փետրվարի 15-ին դիմել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ և ստացել իրավաբանական խորհրդատվություն: Շ.Գ.-ն հրաժարվել է գործին ընթացք տալուց՝ մտախավություն ունենալով, որ արդարացի քննություն չի իրականացվի, և ոստիկանությունը կպաշտպանի իր գործընկերներին:

Դեպքի տեսակը
Խտրականություն

Դեպքի նկարագրություն

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից մեկում արդեն երկու տարուց ավելի կալանավորված է օտարերկրացի տրանս անձ Մ.Գ.-ն: ՀՀ ներպետական օրենսդրության համաձայն՝ օտարերկրացի անձինք պետք է պահվեն օտարերկրացիների հետ, բայց քանի որ ըստ ՔԿՀ վարչակազմի՝ Մ.Գ.-ն «միայն արտաքնապես ունի կանացի տեսք», քրեակատարողական հիմնարկը, անձի անվտանգությունից ելնելով, նրան պահում է առանձին՝ բժշկական մասում:

2023թ-ի մարտի 22-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ է դիմել Մ.Գ.-ի ընկերը և հայտնել, որ Մ.Գ.-ի դատական նիստերն անընդհատ հետաձգվում են, մեկ տարվա մեջ ընդամենը երկու նիստ է տեղի ունեցել, Մ.Գ.-ի կալանքը չեն փոխարինում այլ պատժատեսակով, ոչ էլ նրան այլ խուց են տեղափոխում, և այդ ամենը Մ.Գ.-ին խելագարության է հասցնում:

Մ.Գ.-ի ընկերը հայտնել է, որ նրա հետ այդպես են վարվում իր տրանս անձ լինելու պատճառով:

Միաժամանակ, անձը նաև հայտնել է, որ Մ.Գ.-ն ունի առողջական խնդիրներ՝ հերպես գլխի շրջանում, աչքի տեսողության վատացում: Ըստ անձի՝ վերջին անգամ Մ.Գ.-ին բուժզննության են տարել 2022թ-ի օգոստոս ամսին, և այդ օրվանից ի վեր նրա բժշկական խնդիրներին ոչ ոք ուշադրություն չի դարձնում, քանի որ նա տրանս անձ է:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հանդիսանում է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (Դիտորդների խումբ) անդամ և ստացված տեղեկատվությունը փոխանցել է Դիտորդների խմբին՝ անձին այց կատարելու և խնդիրներին լուծում տալու նպատակով: Դիտորդների խումբը համապատասխան գրություններ է ուղարկել անձին պատշաճ բուժօգնություն տրամադրելու նպատակով:

Դեպք 4

Դեպքի տեսակը
Բռնություն, խտրականություն

Դեպքի նկարագրություն

2023թ.-ի մարտի 23-ին ժամը 13:00-ին ՆՍՀԿ-ն ահազանգ է ստացել այն մասին, որ Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցում մի խումբ անձինք հարձակվել են օտարերկրյա քաղաքացի Ք.Մ.-ի (անունը փոխված է) և ՀՀ քաղաքացի Ա.Ս.-ի (անունը փոխված է) վրա Ք.Մ.-ի «տարբերվող» արտաքին ունենալու պատճառով: Արդյունքում Ք.Մ.-ն և Ա.Ս.-ն ստացել են մարմնական վնասվածքներ: Ք.Մ.-ն գիտակցության մասնակի կորուստ է ունեցել և շտապօգնության մեքենայով տեղափոխվել է Վանաձորի բժշկական կենտրոն: Բժշկական կենտրոնում տուժող Ք.Մ.-ին տրամադրվել է առաջին բժշկական օգնություն, այնուհետև, վերջինիս վիճակը բավարար գնահատելուց հետո, դուրս են գրել հիվանդանոցից: Ոստիկանները տուժողներին ուղեկցել են Վանաձորի ոստիկանության բաժին՝ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու համար [4]:
Ա.Ս.-ն վախեցել է դիմել բուժօգնության, քանի որ գտնվել է հոգեբանական, հուզական ծանր վիճակում, ինչպես նաև մտավախություն է ունեցել, որ հետագայում գուցե այդ հարձակվողները իր հետ հաշվեհարդար տեսնեն, ուստի հրաժարվել է հանցագործության մասին հաղորդում ներկայացնել: Այնուամենայնիվ, ոստիկանության բաժնում ոստիկանների կողմից ճնշում է գործադրվել անձի վրա՝ ստիպելով նրան հաղորդում ներկայացնել:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ահազանգը ստանալուն պես ներգրավվել է գործում և տրամադրել իրավական աջակցություն: ՆՍՀԿ-ն կապ է հաստատել ոստիկանության համապատասխան բաժնի աշխատակցի հետ, որից հետո դադարեցվել են ճնշումները Ա.Ս.-ի նկատմամբ, և տուժողը կարողացել է դուրս գալ ոստիկանության բաժնից:
Տուժողներից Ք.Մ.-ն-ն հաղորդում ներկայացրել է, որի հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ: Գործում ՆՍՀԿ-ի կողմից ներգրավվել է «Արկատ» փաստաբանական գրասենյակը՝ ի դեմս փաստաբան Մարիամ Սահակյանի: 2023թ-ի մայիսի 19-ին Ք.Մ.-ն ճանաչվել է տուժող:
Գործը գտնվում է ընթացքի մեջ:

Դեպք 5

Դեպքի տեսակը
Խտրականություն, բժշկական գաղտնիքի խախտում

Դեպքի նկարագրություն

Մ.Ա.-ն պարտադիր ժամկետային զինվորական ծառայության է մեկնել 2021թ-ի դեկտեմբեր ամսին: Մ.Ա.-ն նույնասեռական անձ է, սակայն բուժզննումների ընթացքում այդ մասին չի բարձրաձայնել՝ վախենալով, որ տեղեկատվությունը կտարածվի, և ընտանիքի անդամները կտեղեկանան այդ մասին: Զինծառայության ընթացքում զինծառայակից ընկերները Մ.Ա.-ի

[4] https://ngngo.net/2023/12/28/eahk-ngngo-2022/

բջջային հեռախոսի մեջ տեսել են իր անձնական նամակագրությունը ընկերոջ հետ, և այդպես բացահատվել է Մ.Ա.-ի սեռական կողմնորոշումը: Այդ մասին տեղեկացել է նաև զորամասի հրամանատարը,և Մ.Ա.-ին տեղափոխել են այլ զորամաս: Այլ զորամաս տեղափոխվելուց հետո Մ.Ա.-ի սեռական կողմնորոշման մասին տեղյակ է եղել միայն այդ զորամասի բուժանձնակազմը, որն էլ, սակայն, այդ տեղեկատվությունը զորամասի այլ զինվորներին է փոխանցել, ինչը պատճառ է հանդիսացել զինծառայակիցների կողմից դիմողի նկատմամբ խտրական վերաբերմունքի՝ ծաղրել են, սեռական բնույթի հայհոյանքներ տվել:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2023թ-ի ապրիլի 19-ինՄ.Ա.-ն դիմել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ և հայտնել մտահոգություն զորամասում իր անվտանգության ապահովման մասով: Կազմակերպության կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն, և դիմումներ են ներկայացվել ՀՀ ՄԻՊ և ՊՆ՝ անձի անվտանգության ապահովման և տեղեկատվության գաղտնիության պահպանման պահանջով:

ՀՀ ՄԻՊ-ի կողմից գրություն է ուղարկվել ՊՆ՝ խնդրելով ստուգել վերոնշյալ հանգամանքները և միջոցներ ձեռնարկել զինծառայողի համար ծառայության այնպիսի պայմաններ ապահովելու ուղղությամբ, որը նրան զերծ կպահի սեռական կողմնորոշման հիմքով խտրական վերաբերմունքից, թիրախավորումից կամ բռնությունից:

Դեպքի տեսակը

Բռնություն

Դեպքի նկարագրություն

Ս.Ա.-ն ՆՍՀԿ-ին հայտնել է, որ 2023թ-ի ապրիլի 23-ին գիշերը ժամը 01:00-ի վսահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախուզության բաժնի ծառայողները, համագործակցելով ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության կարմիր բերետների խմբի հետ, ներխուժել են «Պոլիգրաֆ» ակումբ: Ակումբում գտնվողներին պառկացրել են հատակին, այնուհետև բռնի ուժով տարել ոստիկանական բաժանմունք: Ակումբի աշխատակազմն ու ու այցելուները, որոնց թվում են ԼԳԲՏԻՔ+ անձինք ենթարկվել են դաժան ծեծի, որի հետևանքով մարմնական վնասվածքներ ստացել [5]

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ տուժողների հետ հանդիպել և քննարկել դեպքի մանրամասները, սակայն հետագայում տուժողները հայտնել են, որ չեն ցանկանում բողոքել, քանի որ, ըստ իրենց, ոստիկանությունը միևնույն է որևէ քայլ չի ձեռնարկելու մեղավորներին պատժելու ուղղությամբ:

[5] https://ngngo.net/2023/04/24/poligraf_arm/

Դեպք 7

Դեպքի տեսակը

Բժշկական գաղտնիքի խախտում

Դեպքի նկարագրություն

Վ.Ս.-ն 2023թ-ի մայիսի սկզբներին դաջվածք է արել, որից մի քանի օր անց ալերգիկ ռեակցիաներ են ի հայտ եկել: Վ.Ս.-ն մայրիկի հետ այցելել է Վանաձոր քաղաքի տեղամասային պոլիկլինիկա՝ բժշկի խորհրդատվության և հետազոտության համար: Բժշկի կողմից նշանակվել են մի քանի հետազոտություններ, սակայն անձին չեն հայտնել, թե ինչի համար են այդ հետազոտությունները: Հաջորդ օրը Վ.Ս.-ն կրկին մոր հետ այցելել է պոլիկլինիկա՝ պատասխաններն իմանալու նպատակով: Տեղում Վ.Ս.-ին հայտնել են, որ նրանից ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտության նպատակով են արյուն վերցրել, սակայն արդյունքը չեն անձին չեն հայտնել: Մի քանի օր անց Վ.Ս.-ն նորից է այցելել՝ պատասխանը ստանալու համար, սակայն նրան հայտնել են, որ արդյունքի մասին տեղեկացրել են անձի մայրիկին:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Վ.Ս.-ն 2023թ-ի մայիսի 26-ին դիմել է ՆՍՀԿ, և անձին տրամադրվել է իրավախորհրդատվություն: Վ.Ս.-ին ներկայացվել է բժշկական գաղտնիքի վերաբերյալ իրավական մասը: Քանի որ որևէ կերպ հնարավոր չէր լինի այդ փաստը ապացուցել, ուստի Վ.Ս.-ն չի ցանկացել գործին ընթացք տալ:

2023թ-ի հուլիսին Վ.Ս.-ի մայրը պատմել է, որ բժիշկը իրեն է արդյունքների մասին հայտնել, քանի որ ցանկացել է նաև զգուշացնել որ Վ.Ս.-ն գուցել լեսբի է և, որ մայրը զգույշ լինի, փորձի նրան «ճիշտ ճանապարհի վրա դնել»:

Դեպք 8

Դեպքի տեսակը

Բռնություն

Դեպքի նկարագրություն

2023թ-ի հունիսի 28-ի գիշերը լույս 29-ին տրանս անձ Ս.Ա.-ի (անունը փոխված է) տուն այցելած անծանոթ անձը ծեծի է ենթարկել նրան, հետո կոտրել է բնակարանի ապակիները, դուռը և փախել: Ծեծի հետևանքով տրանս անձը մարմնական վնասվածքներ է ստացել:

Ս.Ա.-ն դիմել է ոստիկանության տարածքային բաժին, ներկայացրել հանցագործության մասին հաղորդում: Հաղորդում ներկայացնելուց հետո հանցագործություն կատարած անձը շարունակել է տուժողին սպառնալիքներ պարունակող նամակներ ուղարկել, որոնցով սպառնացել է տուժողի կյանքին: Ս.Ա.-ն այդ մասին հայտնել է ոստիկանությունը և խնդրել ապահովել իր անվտանգությունը, սակայն իրավապահ մարմինների կողմից որևէ քայլ չի ձեռնարկվել: [6]

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Դեպքի օրը տուժողը ահազանգել է ՆՍՀԿ, և անձին տրամադրվել է իրավական աջակցություն, գործում ներգրավվել է փաստաբան Անահիտ Մկրտչյանը:

2023թ-ի օգոստոսի 11-ին ստացվել է ՀՀ Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչի որոշումը, համաձայն որի՝ վարույթ չի նախաձեռնվել:

[6] https://ngngo.net/2023/06/30/transgender_blng_arm_2023/

Դեպք 9

Դեպքի տեսակը
Բռնություն

Դեպքի նկարագրություն
2023թ-ի հուլիսի 5-ին ժամը 14:00-ի սահմաններում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ աութրիչ, տրանս կին ակտիվիստ Ն.Մ.-ն ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու և թեստավորում իրականացնելու նպատակով գտնվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում:
Այդ ընթացքում նրան է մոտեցել անծանոթ տղամարդ: Նկատելով ու ճանաչելով տրանս ակտիվիստին՝ տղամարդը վիրավորական արտահայտություններ է հնչեցրել և հարվածներ հասցրել տրանս անձի մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, ինչպես նաև խոչընդոտել է իրականացնել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրի շրջանակներում իրականացվող ծառայությունների մատուցումը: [7]

Տրամադրված աջակցությունը և ընթացքը
Տրանս կինը ահազանգել է ոստիկանություն, և դեպքի վայր ժամանած ոստիկանները անծանոթ անձին բերման են ենթարկել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ոստիկանության բաժին:
Միջադեպի ընթացքում տուժողը ահազանգել է ՆՍՀԿ:
Գործով նախաձեռնվել է քրեական վարույթ: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:
ՆՍՀԿ-ի կողմից անձին տրամադրվում է իրավական աջակցություն: Միաժամանակ ՆՍՀԿ-ի աջակցությամբ անձը ստացել է արագ արձագանքման աջակցություն Frontline Deffenders կազմակերպության կողմից:

Դեպք 10

Դեպքի տեսակը
Խտրականություն

Դեպքի նկարագրություն
Մ.Ս.-ն (անունը փոխված է) 2023թ-ի հունիսին դիմել է ՀՀ Զվարթնոց օդանավակայանի ավիաընկերություններից մեկում թափուր հաստիքի մրցույթին: Վերջինիս տեղեկացրել են, որ անհրաժեշտ է ներկայացնել որոշակի փաստաթղթեր, որից հետո կարող է մասնակցել մրցույթի մնացյալ այլ փուլերին: Ներկայացվող փաստաթղթերի ցանկում ներառված է եղել հոգեկան առողջության կենտրոնի կողմից տրամադրված տեղեկանք՝ հաշվառման մեջ չգտնվելու մասին:
Մ.Ս.-ն նույնասեռական անձ է և պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատվել է այդ հիմքով (ներպետական օրենսդրությամբ նույնասեռականությունըհամարվում է հոգեկան խանգարում): Վերջինս զինծառայությունից ազատման պատճառի մասին ավիաընկերությանը տեղեկացրել է և հայտնել, որ հոգեկան առողջության կենտրոնի կողմից նմանատիպ փաստաթուղթ չի կարող տրվել: Մ.Ս.-ին ավիաընկերությունից տեղեկացրել են, որ պահանջվող փաստաթղթի չներկայացման պարագայում չի կարող մասնակցել մրցույթին և ընդունվել աշխատանքի:

[7] https://ngngo.net/2023/07/07/tiraxavorvum-e-trans-aktivist-nskh-autrich/

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2023թ-ի հուլիսի 6-ին Մ.Ս.-ն դիմել է ՆՍՀԿ՝ իրավական աջակցություն ստանալու խնդրանքով: ՆՍՀԿ-ն կապ է հաստատել ավիաընկերության համապատասխան բաժնի աշխատակցի հետ՝ հարցը քննարկելու նպատակով, սակայն աշխատակիցը հայտնել է, որ որևէ քննարկում անիմաստ ժամանակի վատնում է, և նրանք չեն պատրաստվում անձին աշխատանքի ընդունել:
ՆՍՀԿ-ն հարցում է ուղարկել ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտե: Գործը գտնվում է ընթացքի մեջ:

Դեպք 11

Դեպքի տեսակը

Բռնություն

Դեպքի նկարագրություն

Ն.Ա.-ն աշխատանքի վայրում մշտապես խնդիրներ է ունեցել իր սեռական կողմնորոշման հետ կապված՝ աշխատակիցների կողմից ենթարկվել է ծաղրի, և այդ խնդիրների պատճառով որոշել է որոշ ժամանակ անց դուրս գալ աշխատանքից: 2023թ-ի հուլիսի 10-ին, երբ աշխատավայրում հավաքույթ է կազմակերպվել, աշխատակիցները կատակելով կրկին անդրադարձել են Ն.Ա.-ի սեռական կողմնորոշմանը, որի արդյունքում անձը իրեն նվաստացած է զգացել: Ն.Ա.-ն բարձրաձայնել է այդ մասին և խնդրել նմանատիպ կատակներ չանել, սակայն աշխատակիցները սկսել են բղավել և վիճել Ն.Ա.-ի հետ: Դրանից հետո ռեստորանի սեփականատերը հայտնել է, որ Ն.Ա.-ն էլ չի կարող աշխատանքի գալ:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Ն.Ա.-ն 2023թ-ի հուլիսի 11-ին դիմել է ՆՍՀԿ և ստացել իրավաբանական խորհրդատվություն: Ն.Ա.-ն չի ցանկացել քայլեր կատարել՝ աշխատանքին վերականգնվելու համար, քանի որ միևնույն է արդեն որոշել էր դուրս գալ: Ն.Ա.-ի մտավախությունը կայացել է նրանում, որ իրեն վերջնահաշվարկ չեն տրամադրի: Խորհրդատվության արդյունքում անձը, տեղեկանալով իր իրավունքների մասին, կարողացել է գործատուից ստանալ իր վերջնահաշվարկը:

Դեպք 12

Դեպքի տեսակը

Խտրականություն, բռնություն

Դեպքի նկարագրություն

2023թ-ի օգոստոսի 20-ին՝ ժամը 16:55-ի սահմաններում, իր բնակարանում առանձնակի դաժանությամբ սպանվել է տրանսգենդեր կին Ա.Ս.-ն: Ըստ նախնական տեղեկությունների՝ սպանությունից հետո հանցագործը հետքերը թաքցնելու նպատակով այրել է բնակարանը և հեռացել[8]:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Դեպքի առնչությամբ նախաձեռնվել է քրեական վարույթ: Իրավապահ մարմիններին հաջողվել է բացահայտել սպանության մեջ կասկածվող անձի ինքնությունը: Կասկածյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը[9]:

[8] https://ngngo.net/2023/08/21/transphobia_adriana_arm/
[9] https://armeniasputnik.am/20230823/28-amja-transgender-knvojy-spanel-en-tmramijvocneri-shrjanarutjan-het-kapvats-vetshi-zhamanak-64792859.html

Դեպք 13

Դեպքի տեսակը
Խտրականություն խոշտանգում

Դեպքի նկարագրություն
2023թ-ի մայիսի 3-ին Ոստիկանության Երևան քաղաքի Արաբկիրի բաժնի ոստիկանության աշխատակիցները Դ.Ա.-ին և իր ընկերոջը բերման են ենթարկել՝ թմրանյութեր ապօրինի պահելու, օգտագործելու և իրացնելու կասկածանքով: Նրանց երեք օր պահել են ձերբակալված անձանց պահման վայրում: Այնտեղ գտնվելու ընթացքում քննիչները Դ.Ա.-ի հեռախոսը միացրել են և հոգեբանական ճնշում գործադրելու արդյունքում ստացել հեռախոսի գաղտնաբառը: Հեռախոսը բացելուց հետո քննիչները, ուսումնասիրելով հեռախոսում առկա նյութերը, բացահայտել են Դ.Ա.-ի և նրա ընկերոջ սեռական կողմնորոշումը և այն փատը, որ նրանք զուգընկերներ ենք: Դրանից հետո քննիչները նրանց ասել են, որ իրենց մասին, այսինքն՝ վերջիններիս նույնասեռական լինելու մասին քրեակատարողական հիմնարկում տեղեկացված են, և արդեն այնտեղ նրանց սպասում են ու գիտեն, թե ինչպես կվարվեն նրանց հետ: Ամբողջ ընթացքում քննիչները ծաղրել են և ծիծաղել, ուսումնասիրել հեռախոսը և մեկնաբանություններ արել անձանց նույնասեռական լինելու վերաբերյալ:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը
Դ.Ա.-ն ՆՍՀԿ է դիմել 2023թ-ի հունիսի 7-ին և անձին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն:
Դիմողը հրաժարվել է ոստիկանների գործադրած ճնշումների մասով բողոքել՝ վախենալով, որ ոստիկանների անօրինական գործողությունները ոչ մի կերպ չեն կարող ապացուցել, և դա միայն իրենց վնաս կլինի՝ բացասաբար կանդրադառա նախաձեռնված վարույթի ընթացքի վրա:

Դեպք 14

Դեպքի տեսակը
Խտրականություն խոշտանգում

Դեպքի նկարագրություն
Օ.Ա.-ն տրանս անձ է և բնակվում է Երևան քաղաքում վարձակալության հիմունքներով: 2023թ-ի հունիսին տեղափոխվել է նոր բնակարան և նախապես վճարել բնակարանի մեկ ամսվա վճարը: Անձը բնակարանի սեփականատիրոջը նախապես հայտնել է իր տրանսգենդեր լինելու մասին: 15 օր բնակվելուց հետո բնակարանի տերը զանգահարել է և անձից պահանջել լքել բնակարանը, քանի որ տեղեկացել է նրա ով լինելու (տրանսգենդեր) մասին, և բնակարանը վարձակալության հանձնելիս չի հասկացել, թե ինչ է նշանակում տրանս անձ: Բնակարանի տերը պահանջել է մի քանի ժամվա ընթացքում ազատել բնակարանը և ասել, որ եթե նա ի սկզբանե հասկանար թե ինչի մասին է խոսքը, բնակարաբար նրան տուն չէր հանձնի:
Օ.Ա.-ն ստիպված հավաքել է իրերը և լքել բնակարանը, սակայն բնակարանի տերը հրաժարվել է անձին վերադարձնել վարձավճարի մնացած մասը:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2023թ-ի օգոստոսի 3-ին Օ.Ա.-ն դիմել է ՆՍՀԿ՝ վարձավճարի մնացած մասը վերադարձնելուն աջակցելու խնդրանքով: ՆՍՀԿ-ի կողմից անձին տրամադրել է իրավական խորհրդատվություն, բնակարանի տիրոջը գրավոր նամակ է ուղարկվել, և ժամանակ տրամադրվել՝ գումարի մի մասը վերադարձնելու համար: Վերջինս պարտավորվել է վերադարձնել:
Գործը գտնվում է ընթացքի մեջ:

ԱՅԼ ՀԻՄՔՈՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔԵՐ

Դեպք 15

Դեպքի տեսակը

Խտրականություն

Դեպքի նկարագրություն

Վ.Լ.-ն (անունը փոխված է) կոմերցիոն սեռական ծառայություն մատուցող կին է, աշխատել է սպասարկման ոլորտում: 2023թ.-ի մարտին գործատուից թույլտվություն է խնդրել բժշկի գնալու նպատակով և նշել, որ պետք է որոշակի հետազոտություններ անցնի, ինչի պատճառով մի քանի ժամ ստիպված է բացակայել աշխատավայրից: Գործատուն բավարարել է կնոջ խնդրանքը և թույլատրել բացակայել աշխատավայրից: Վ.Լ.-ի գնալուց հետո գործատուն պարբերաբար զանգահարել է ճշտելու, թե ինչպես է նա և առողջական ինչ խնդիրներ ունի:
Վ.Լ.-ն այցելել էր Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտություն անցնելու նպատակով, և վերջնական արդյունքներով հաստատվել էր նրա դրական կարգավիճակը: Վ.Լ.-ն այդ մասին հայտնում է գործատուին, վերջինս, դա իմանալուն պես, Վ.Լ.-ին ազատում է աշխատանքից:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն, պարզաբանվել, որ Կառավարության որոշմամբ սահմանված են այն ոլորտները, որտեղ չեն կարող աշխատել ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող անձինք, համաձայն որի՝ սպասարկման ոլորտը չի մտնում այդ ցանկում:
Առաջարկվել է քննարկել գործին ընթացք տալու և աշխատանքին վերականգնվելու հետ կապված հարցերը, սակայն անձը հրաժարվել է՝ տեղեկացնելով, որ նոր աշխատանք է գտել:

Դեպք 16

Դեպքի տեսակը
Խտրականություն

Դեպքի նկարագրություն

Մ.Ա.-ն օտարերկրյա պետության քաղաքացի է, և մոտ երկու տարի բնակվում է ՀՀ-ում: Վերջինիս մոտ 2022թ-ին հայտնաբերվել է ՄԻԱՎ դրական կարգավիճակ: Մ.Ա.-ն ցանկացել է ՀՀ տարածքը լքել և տեղափոխվել այլ երկիր՝ մշտական բնակություն հաստատելու նպատակով, ուստի քայլեր է ձեռնարկել այդ ուղղությամբ: Վերջինս 2023թ-ի ապրիլի 20-ին մոտեցել է ՀՀ Երևան քաղաքի անձնագրային բաժանմունքներից մեկը՝ տեղեկանալու երկրից դուրս գալու համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին: Անձնագրային բաժանմունքում նա հայտնել է իր ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին, որպեսզի ճշտի՝ արդյոք կարգավիճակը կարող է խոչընդոտ լինել երկրից դուրս գալու համար, թե ոչ: Անձնագրային բաժանմունքի աշխատակիցը, տեղեկանալով անձի դրական կարգավիճակի մասին, միանգամից հրաժարվել է սպասարկել:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Մ.Ա.-ն 2023թ-ի ապրիլի 26-ին դիմել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ՝ իրավաբանական խորհրդատվություն ստանալու նպատակով:
Անձը տեղեկացվել է ներպետական օրենսդրությամբ սահմանված բոլոր ընթացակարգերի և իր իրավունքների ոտնահարման մասին:
Դիմողը չի ցանկացել բողոքել անձնագրային բաժնի աշխատակցի դեմ, քանի որ դա երկար է տևելու, իսկ նա շուտով երկիրը լքելու է:

Դեպք 17

Դեպքի տեսակը
Խտրականություն

Դեպքի նկարագրություն

Ն.-ն կոմերցիոն սեռական ծառայություն մատուցող կին է, և 2023թ-ի հունվարին ամուսնալուծվել է: Համատեղ ամուսնության ընթացքում ունեցել է երեք երեխա: Քանի որ ամուսնալուծությունից հետո երեխաների հայրը հրաժարվել է ալիմենտ վճարել, ուստի Ն.-ն ցանկացել է դատական կարգով գործին ընթացք տալ, սակայն նախկին ամուսինը սպառնացել է կնոջը, որ եթե դատարան դիմի, ապա նա երեխաներին խնամքը վերցնելու համար դատական հայց կներկայացնի կնոջ դեմ, և որպես հիմնավորում կներկայացնի այն հանգամանքը, որ կինը զբաղվում է սեռական ծառայությունների մատուցմամբ, ինչպես նաև կնշի, թե երեխաներին նույնպես ներգրավվում է այդ ամենում:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2023թ-ի հունվարի 26-ին Ն.-ն ուղղորդվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ՝ իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար:
Իրավաբանի կողմից ներկայացվել է դատական կարգով ալիմենտի բռնագանձնման, ինչպես նաև երեխայի խնամքի հետ կապված օրենսդրական կարգավորումները: Անձը տեղեկացրել է, որ կրկին կփորձի առանց դատական միջամտության հարցը լուծել, և եթե չստացվի, նորից կապ կհաստատի: Որոշ ժամանակ անց անձը հայտնել է, որ նախկին ամուսնու հետ ընդհանուր հայտարարի են եկել, և վերջինս վճարում է ալիմենտը:

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Սույն բաժնում ներկայացված են 2023թ-ի ընթացքում շարունակված ռազմավարական դատավարության մի քանի առանձնահատուկ նշանակության գործեր.

Գործ 1

Գործի նկարագրություն

Տրանսգենդեր կին Ս.Պ.-ի և Ա.Ս.-ի նկատմամբ 2017թ.-ի սեպտեմբերի 22-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով: Գործի նախապատմությունը ներկայացված է 2018թ.-ի իրավական ամփոփագրում (Դեպք 3) [10]: Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում Ս.Պ.-ն բազմիցս ենթարկվել է դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և խոշտանգման, որի վերաբերյալ նույնպես փաստաբանի կողմից ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում: Ս.Պ.-ն և Ա.Ս.-ն շուրջ երկու տարի գտնվել են անօրինական կալանքի տակ, որի վերաբերյալ գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ [11]:

Գործի իրավական ընթացքը

Գործում ներգրավված է ՆՍՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանը:

2020թ.-ի սեպտեմբերի 24-ին ՄԻԵԴ-ի կողմից կայացվել է վճիռ Ա.Ս.-ն ընդդեմ Հայաստանի և Ս. Պ.-ն ընդդեմ Հայաստանի գործերով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունել է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված դիմումատուների իրավունքների խախտումը և վճռով ՄԻԵԴ-ը պետությանը պարտավորեցրել փոխհատուցում տրամադրել [12]:

Մինչ օրս քրեական գործը գտնվում է դատաքննության փուլում: 2023թ-ի ընթացքում գործով նշանակվել է 3 դատական նիստ:

Գործ 2

Գործի նկարագրություն

ՆՍՀԿ շահառուներ Գ. Գ.-ի, Ա.Ս.-ի և Հ.Մ.-ի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան՝ ընդդեմ «Իրավունք Մեդիա»ՍՊ ընկերության խմբագրական խորհրդի նախագահ Հայկ Բաբուխանյանի, Հովհաննես Գալաջյանի www.iravunk.com ինտերնետային լրատվական կայքում հրապարակված «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը. ազգի և պետության թշնամիների ս ցուցակը» վերնագրով հոդվածը հերքելուն և հրապարակայնորեն ներողություն խնդրելուն, յուրաքանչյուրին որպես պատճառված վնաս 3.000.000.0 ՀՀ դրամ գումար փոխհատուցելուն պարատավորեցնելու պահանջների մասին [13]:

[10] https://ngngo.net/wp-content/uploads/2020/03/a6.pdf
[11] https://ngngo.net/2020/09/25/%d5%b4%d5%ab%d5%a5%d5%a4/
[12] https://ngngo.net/2020/09/25/%d5%b4%d5%ab%d5%a5%d5%a4/
[13] https://www.google.com/url?q=https://old2.ngngo.net/hy/news/statement/221&sa=D&source=apps-viewer-frontend&ust=1696675956116455&usg=AOvVaw0mwHvW4XUbbe-b1TABaJK0&hl=hy

Գործի իրավական ընթացքը

ՆՍՀԿ-ն սույն գործով շահառուներին տրամադրել է քաղաքացիական գործերով փաստաբան: 2022թ-ին գործում ներգրավված է եղել փաստաբան Արայիկ Զալյանը:

2020թ.-ի փետրվարի 3-ին առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվել է վճիռ [14], հայցը բավարարվել է մասնակի: ՆՍՀԿ-ի կողմից բողոքարկվել է վճիռը վերաքննիչ, այնուհետև վճռաբեկ դատարաններում:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (Դատարան) որոշմամբ 2020 թվականի փետրվար ամսին վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության»:

2021թ-ի մայիսի 17-ին Դատարանի կողմից որոշում է կայացվել գործն ընդունել դատական վարույթ, և նշանակվել է նախնական դատական նիստ: Գործը վարույթ ընդունելուց հետո նշանակվել են թվով 6 դատական նիստեր, որոնցից մեծ մասը տեղի չեն ունեցել, իսկ 2023թ-ի փետրվարին գործով դատավորի լիազորությունների դադարեցման հիմքով այն մակագրվել է այլ դատավորի: Դրանից հետո մինչ օրս գործով նշանակվել է 3 դատական նիստ, որից 2-ը չի կայացել:

Գործ 3

Գործի նկարագրություն

2020 թ.-ի հունիսի 3-ին Ա.Ա.-ն իր ընկերների հետ գտնվել է Երևան քաղաքի իրենց ամառանոցում: Մի խումբ անձինք հարձակվել են Ա.Ա.-ի տան վրա և հայոյելով պահանջել են հեռանալ՝ կապված Ա.Ա-ի և նրա ընկերների ենթադրյալ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ: Սկսվել է վիճաբանություն, որից հետ խումբը հարձակվել է Ա.Ա-ի և նրա ընկերների վրա՝ պատճառելով մարմնական վնասվածքներ [15]:

Գործի իրավական ընթացքը

Գործում ներգրավված է ՆՍՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանը:

2020 թ.-ի հուլիսի 6-ին որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին [16]: 2021թ-ի ապրիլի 6-ին ավարտվել է գործով նախաքննությունը, և այն ուղարկվել է դատարան [17]:

2022 թվականի հունիսի 7-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Վարդան Գրիգորյանի նախագահությամբ, կայացրել է *դատավճիռ*, համաձայն որի՝ գործը կարճվել է, քրեական հետապնդումը դադարեցվել՝ վաղեմության ժամկետը լրանալու հիմքով:

Դատարանի որոշումը բողոքարկվել է վերաքննիչ, այնուհետև վճռաբեկ դատարաններ, սակայն դրական արդյունքի չհասնելու հետևանքով փաստաբանի կողմից 2023թ-ին գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ:

[14] https://old2.ngngo.net/hy/news/statement/221
[15] https://ngngo.net/2020/07/31/police/
[16] https://ngngo.net/2020/07/31/police/
[17] https://ngngo.net/2022/08/03/nerkayacveleboxoq/

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՌՅԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ



ՏՈՐԵԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵԿՈՒՅՑ 2023

Ատելության խոսքը դեռևս ո՛չ ներպետական, ո՛չ էլ միջազգային մակարդակներում չունի մեկ համընդհանուր սահմանում: Այն գործնականում միջազգային կառույցների կողմից ձևակերպվել է ընդհանրական եզրույթներով, որոնք ուղղորդումներ են տալիս օրենսդրորեն արգելելու խոսքի որոշակի տեսակներ [18]:
Ժամանակակից աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում սոցիալական ցանցերը զգալի տեղ են զբաղեցնում հասարակության առօրյա կյանքում: Այդ ամենին զուգահեռ՝ խտրականության, անհանդուրժողականության և ատելության խոսքի դրսևորումները առկա են նաև առցանց հարթակում: Ատելության խոսքի դրսևորումները, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023թ-ին նկատելի են եղել և՛ անհատ օգտատերերի, և՛ լրատվամիջոցների պաշտոնական սոցիալական հարթակներում: Հայաստանյան առցանց հարթակում դրսևորվող խտրականության, անհանդուրժողականության և ատելության խոսքի հիմնական թիրախներից են ԼԳԲՏԻՔ+ անձինք: Վերջիններիս նկատմամբ դրսևորվող ատելության խոսքը կրում է պարբերական բնույթ: Նաև այն հաճախակի օգտագործվում է քաղաքական մանիպուլիացիաների նպատակով:
Ստորև ներկայացվում են ակնառու մի քանի դեպքեր.



2023թ-ի սեպտեմբերի 17-ին տեղի ունեցավ Երևանի քաղաքապետի ընտրությունները, որում թեկնածություն էին դրել ինչպես գործող, այնպես էլ ընդդիմության ներկայացուցիչներ: Գործող իշխանությունից քաղաքապետի թեկնածուն էր Տիգրան Ավինյանը, ով զբաղեցնում էր քաղաքապետի տեղակալի պաշտոնը: 2023թ-ի օգոստոսի 23-ից մեկնարկեց ավագանու ընտրությունների քարոզարշավը, որի ընթացքում կրկին ԼԳԲՏԻՔ+ անձինք հայտնվեցին ատելության թիրախում: Ընտրություններում գործող իշխանության հաղթանակը թույլ չտալու համար՝ լրատվամիջոցները [19] և սոցիալական ցանցերի օգտատերերը [20] սկսեցին մեկը մյուսի հետևից նյութեր հրապարակել Տիգրան Ավինյանի վերաբերյալ՝ վերջինիս կապելով ԼԳԲՏԻՔ+ համայնքի հետ և դա որակելով՝ որպես ամոթալի այլասերվածություն: Փաստացի կրկին ԼԳԲՏԻՔ+ անձինք դարձան քաղաքական շահարկումների զոհը:

[18] https://drive.google.com/file/d/17GYrkFGs8PCd3X1zh8k5f8toonE1kA-O/view
[19] https://lurer.com/?p=529706&l=am
[20] https://www.facebook.com/permalink.php?story_fbid=281344181265071&id=100081684732524&ref=embed_post

2023թ-ի օգոստոսի 21-ին համացանցով տարածվեցին տրանս կնոջ սպանության մասին լուրերը: Սոցիալական ցանցերում դեպքի վերաբերյալ նյութերի մեկնաբանություններում օգտատերերի կողմից արդարացվում է սպանությունը՝ հաշվի առնելով տուժողի տրանս կին լինելու հանգամանքը [21], [22]:



Սպանության դեպքին անդրադարձել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը և ընդգծել.

«Խիստ դատապարտելի է ցանկացած հիմքով ատելության խոսքի և բռնության կոչերի տարածումը, որը լուրջ վտանգ է ներկայացնում մարդու իրավունքների պաշտպանության ամբողջ համակարգի տեսանկյունից և կարող է հանգեցնել ատելության հիմքով հանցանքների կատարմանը»:

[21] https://www.youtube.com/watch?v=NFqIv5HGeQs
[22] https://www.facebook.com/photo/?fbid=691094753060544&set=pb.100064800753633.-2207520000

Առցանց հարթակում խտրականության և ատելության խոսքի թիրախում են հայտնվում ոչ միայն ԼԳԲՏԻՔ+ անձինք, այլ նաև վերջիններիս հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունները:


U.S. Embassy Yerevan
18 мая 2023 г.

Համերաշխություն ենք հայտնում ԼԳԲՏՔԻԱ+ համայնքին ու վերահաստատում մեր հանձնառությունը խթանելու ներառումն ու հավասարությունը բոլորի համար: «Մեր համոզմամբ բոլորը պետք է ունենան հավասար իրավունքներ ու հնարավորություններ և պետք է կարողանան ապրել իրենց կյանքն առանց վախի, խտրականության ու բռնության», - ասաց դեսպան Քվինը Հոմոֆոբիայի, բիֆոբիայի, ինտերֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա առիթով կազմակերպված քննարկման ընթացքում: Եկե՛ք տոնենք մեր տարբերությունները և ընդունենք բազմազանությունն իր բոլոր ձևերով:

We stand in solidarity with the #LGBTQIA+ community and reaffirm our commitment to promoting acceptance, inclusion, and equality for all. "It is our firm belief that everyone should have equal rights and opportunities and should be able to live their lives as their true selves free of fear, discrimination, and violence," said Ambassador Kvien while speaking at a discussion of stakeholders on the International Day Against Homophobia, Biphobia, Interphobia, and Transphobia (IDAHOBIT). Let's celebrate our differences and embrace diversity in all its forms. #IDAHOBIT2023

Топовый поклонник
Laura Khachikyan
Հայաստանն այնքան փոքր է և հայ ժողովուրդն էլ իր հայրենիքում այնքան քիչ, որ մենք ես մի տրոհման՝ կարիք չունենք: Սուրբ Գիրքը մեզ հորդորել է հեռու մնալ ամեն տեսակ պղծություններից: Դա արհեստածին կազմակերպություն է փաթաթված ժողովրդի խղճին, որ տանում է աշխարհի կործանման: Մարդ պիտի ապրի մաքուր խղճով և ոչ թե մեղքերի մեջ թաղված: Խորհուրդ կտամ ԱՄՆ-ում էլ խորհել այս մասին: ԱՄՆ-ը սիրում եմ միայն այն պատճառով, որ աշխարհում միակ երկիրն է, որի հայերն այն կառուցել են քրիստոնեական արժեքների հիմքի վրա: Քրիստոնեական արժեքներից հեռանալը, լավ տեղ չի տանելու:

42 нед. Нравится Ответить Отредактировано 2

2023թ-ին նույնպես շարունակվել են թիրախավորել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին՝ հնչեցնելով ատելության խոսք, սպառնալիք և այլն:

Առցանց հարթակում ատելության խոսքի տարածման, բռնության արդարացման վերաբերյալ ներպետական կարգավորումները դեռևս շարունակում են թերի մնալ, իսկ առկա կարգավորումները արդյունավետ չեն գործում, մասնավորապես այն դեպքերում, երբ դրանք հնչեցվել են անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով:

ՀՀ Կառավարության կողմից 2023թ-ին հրապարակվել է է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագիրը (Ծրագիր) [23]:, որով անդրադարձ է կատարվում ատելության խոսքի վերաբերյալ որոշակի կարգավորումների:

Ծրագրի 4-րդ բաժինը նվիրված է իրավահասավության, խտրականության արգելքին, որի շրջանակներում նախատեսված է մինչև 2024թ.-ի ավարտը մշակել համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ սահմանելով ատելության խոսքի առավել մեղմ դրսևորումների համար պատասխանատվության միջոցներ և ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը, իսկ ԱԺ-ին ներկայացնելու ժամկետ է սահմանված 2025թ.-ի առաջին կիսամյակը: Ծրագրի գործողություններով նաև նախատեսված է ոստիկանության, քննչական մարմինների, դատախազության համար մշակել և հաստատել խտրականության, ատելության խոսքի և այլ շարժառիթով գործերի քննության ուղեցույցներ, ինչպես նաև նախատեսված է ամրագրել ատելության խոսքի ընդունելի սահմանումը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծում՝ միջազգային չափանիշներին համապատասխան գնահատման չափորոշիչներով, հաստատել այն և ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:

Դրական է գնահատվում պետության կողմից ձեռնարկվող քայլերը, սակայն կարևոր է ևս մեկ անգամ նշել, որ օրենսդրական նման նախաձեռնությունները արդյունավետ չեն կարող լինեն, եթե անտեսվեն ԼԳԲՏԻՔ+ անձանց վերաբերյալ համապատասխան ամրագրումները:

[23] https://www.e-draft.am/projects/5472/about

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ՀՀ-ն հռչակված է որպես իրավական և ժողովրդավարական պետություն, որի կարևորագույն չափանիշներից է մարդու իրավունքների իրական պաշտպանությունը երաշխավորող մեխանիզմների առկայությունը:
Այդ առումով հիմնարար նշանակություն ունի մարդու նկատմամբ ցանկացած խտրականության բացառումը:

ՀՀ Սահմանադրության հոդված 29-ով արգելվում է խտրականությունը [24]:

Խտրականության վերաբերյալ ՀՀ իրավական ակտերում կան կարգավորումներ, սակայն դրանք թերի են և լիարժեք չեն ապահովում անձանց իրավունքների պաշտպանությունը: ՀՀ-ում չկա ոլորտը կարգավորող համապարփակ օրենսդրություն, և դրա անհրաժեշտությունը շատ կարևոր է, որպեսզի ապահովվի խոցելի բոլոր խմբերի խտրականությունից պաշտպանվելու իրավունքը: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է ԼԳԲՏԻՔ+ անձանց, քանի որ վերջիններս առավել խտրականության ենթարկվող խումբն են ՀՀ-ում, և դա հաստատվում է, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023թ-ին ՍԿԳԻ հիմքով խտրականության դեպքերի փաստագրմամբ:

ՀՀ-ն, Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերը վավերացնելով, ստանձնել է պարտավորություններ և պարտավոր է ապահովել յուրաքանչյուր անձի և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ՝ անկախ որևէ հանգամանքից: Այդ առումով կարևոր քայլ է պետության կողմից օրենսդրական համախապատասխան մեխանիզմների ստեղծումը և դրանց պատշաճ կատարման ապահովումը:

Ներպետական համակարգում օրենսդրական փոփոխությունները կրում են պարբերական բնույթ, սակայն ԼԳԲՏԻՔ+ անձանց մասով այդպես էլ որևէ եական դրական ամրագրումներ չեն կատարվում, որով էլ չի ապահովվում անձանց իրավունքների պաշտանությունը:

Մասնավորապես, 2018թ-ից շրջանառության մեջ է դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը[25], որը մինչ օրս չի ընդունվել: Բազմիցս խոսվել է այն մասին, որ նախագիծը թերի է, քանի որ այնտեղ բացակայում են խտրականությունն արգելող մի շարք դրույթներ, ինչպիսիք են սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:

2023թ-ի մարտ ամսին ՀՀ Կառավարության կողմից հրապարակվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2055թթ. գործողությունների ծրագիրը [26], որի համաձայն՝ մինչև 2024թ-ի ավարտը վերոնշյալ օրենքի նախագծի վերջնական տարբերակը պետք է ներկայացվի Ազգային ժողով:

[24] https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723
[25] https://www.e-draft.am/projects/1801/about
[26] www.e-draft.am/projects/5472/about

Պետք է նշել, որ 2022թ-ին տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում խտրականությունը քրեականացվեց[27]: Իհարկե, այդ ամրագրումը մեծ հաշվով ԼԳԲՏԻՔ+ անձանց չի պաշտպանել և չի պաշտպանում խտրականությունից, իսկ ենթարկվելու դեպքում այդ հոդվածը չի կիրառվում: Հոդվածում ուղղակիորեն ամրագրված չէ ՍԿԳԻ-ն՝ որպես պաշտպանված հատկանիշ, նշված է անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ եզրույթը, որն էլ կիրառության ընթացքում առաջացնում է դժվարություններ, քանի որ նշված եզրույթի մեկնաբանությունը որևէ տեղ առկա չէ:
ՀՀ օրենսդրությունում կան նաև ԼԳԲՏԻՔ+ անձանց առնչվող այլ խնդիրներ՝ նույնասեռականությունը շարունակում է դասվել հոգեկան խանգարումների շարքին [28], թեպետ այն վաղուց որպես հիվանդություն չի դիտարկվում Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից: Այդ հիմքով անձինք ազատվում են զինվորական ծառայությունից, քանի որ իրենց անվտանգությունը ապահովված չէ: Դա հաստատվում է նաև արդեն իսկ ծառայության մեջ գտնվող անձանց նկատմամբ տեղի ունեցած ճնշումների, բռնության դեպքերով: 2023թ-ին Կառավարության 404-ն որոշման մեջ տեղի ունեցավ օրենսդրական փոփոխություն, որով լրացում կատարվեց նաև նույնասեռական անձանց վերաբերյալ հոդվածում՝

սեռական կողմնորոշման այն ձևերը, որոնք չեն հանդիսանում հոգեբանական և վարքային խանգարումներ կամ չեն զուգակցվում դրանցով, խոչընդոտ չեն զինվորական ծառայության համար:

Այս լրացումը որևէ դրական նշանակություն չունի, ավելին այն ավելի է խարանում նույնասեռական անձանց: Վերջիններիս կողմից զինծառայության չմեկնելը պայմանավորված է իրենց անվտանգության ապահովման բացակայությունից: Եվ արդյունքում ստացվում է մի իրավիճակ, երբ անձինք ստիպված են ընդունել, որ իրենց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը հոգեբանական և վարքային խանգարում է:

Ներպետական համակարգում նույնասեռականությունը որպես հոգեկան խանգարում որակելու հետևանքով անձինք մի շարք այլ խնդիրների են բախվում, որոնց մասին ՆՍՀԿ-ն մշտապես բարձրաձայնել է: Մասնավորապես, ՀՀ-ում գործադրված առողջապահական միասնական համակարգում՝ «Արմեդ»-ում, որում պարտադիր է անձի առողջական վիճակի, ինչպես նաև բժշկական հետազոտությունների մասին տեղեկատվության արտացոլումը, արտացոլվում է նաև անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վերաբերյալ տվյալները, եթե անձինք զորակոչի ընթացքում բացահայտում են իրենց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը: ՆՍՀԿ-ն այս մասով բազմաթիվ քննարկումներ է ունեցել ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան բաժնի աշխատակիցների հետ: 2023թ-ին շարունակվել են քննարկումները՝ համակարգում այդ մասով տեղեկատվությունը փակելու ուղղությամբ:

[27] https://www.arlis.am/documentView.aspx?docid=189521 , հոդված 203
[28] https://www.arlis.am/documentview.aspx?docID=121634 , 1-ին սյունակի 8-րդ հոդված

Վերոնշյալը միակ խնդիրը չէ, որին անձինք առնչվում են նշված հիմքով պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատվելիս: Վերջիններիս համար խոչընդոտներ են առաջանում որոշակի մասնագիտություններով ուսման և աշխատանքի ոլորտներում: Քանի որ նույնասեռականությունը համաձայն ՀՀ ներպետական իրավական ակտերով համարվում է հոգեկան խանգարում, ուստի համապատասխան ախտորոշումը տրվում է հոգեկան առողջության կենտրոնի կողմից, և անձինք հաշվառվում են այնտեղ: Դրա հետևանքով նույնասեռականության հիմքով զինծառայությունից ազատված անձինք չեն կարողանում համապատասխան փաստաթուղթը ներկայացնել այն աշխատանքների համար, որտեղ պահանջվում է հոգեկան առողջության կենտրոնի կողմից հաշվառված չլինելու մասին փաստաթուղթ, հետևաբար զրկվում են այդ աշխատանքին ընդունվելու հնարավորությունից:

Խոսելով օրենսդրական կարգավորումներից՝ հարկ է նշել, որ մինչ օրս կարգավորված չէ ո՛չ գենդերի անցման միջամտությունների, ոչ էլ գենդերի իրավական նշումի փոփոխման վերաբերյալ իրավական դաշտը:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ անձանց իրավունքների լիարժեք պաշտպանության վերաբերյալ օրենսդրական ամրագրումներին զուգահեռ պետությունը պետք է ապահովի դրանց պատշաճ կատարումը: Եվ այս ամենում առանձնակի նշանկություն ունի իրավապահ մարմինների դերը, քանի որ ոստիկանության համակարգը կոչված է պաշտպանելու բոլորի իրավունքները: Ցավոք, գործնականում դա այնքան էլ այդպես չէ, ինչը ապացուցվում է ոչ միայն նախորդ տարիների, այլ նաև 2023թ-ին փաստագրված դեպքերով: ԼԳԲՏԻՔ+ անձանց իրավունքները խախտվում են հանրային կյանքի բոլոր ոլորտներում ոչ միայն հասարակության, այլ նաև պետական կառույցների կողմից: Վերջիններիս բացասական վերաբերմունքը ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ հանգեցնում է նրան, որ ԼԳԲՏԻՔ+ անձինք իրավունքի ոտնահարման դեպքերում պարզապես չեն դիմում համապատասխան մարմիններին:

2023թ-ին արձանագրված իրավախախտումների դեպքերի 30 տոկոսով ԼԳԲՏԻՔ+ անձինք չեն ցանկացել դիմել իրավապահ մարմիններին, քանի որ իրավապահների կողմից դրսևորվող հոմոֆոբիան/տրանսֆոբիան ազդում է իրավախախտումների չարձանագրման, ոչ պատշաճ քննության, այլ հոդվածներով որակմանը և այլ խնդիրների, որով էլ պարզ է դառնում իրավապահ մարմինների կամքի բացակայությունը՝ անձի ենթադրյալ կամ իրական ՍԿԳԻ հիմքով խտրականության և բռնության դեպքերին ճիշտ քրեաիրավական որակում և ընթացք տալու հետ կապված: Այս ամենի հետևանքով տուժողները զրկվում են իրենց խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից, ինչը հանգեցնում է նոր հանցագործությունների, ձևավորվում է անպատժելիության մթնոլորտ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածում որպես խտրականության պաշտպանված հատկանիշ ներառել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը,

Ընդունել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որում պաշտպանված հիմքերի ցանկում ներառել սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը:

Ձեռնարկել գործուն և արդյունավետ քայլեր «Գենդերի իրավական նշումի փոփոխման մասին» ՀՀ օրենքի ընդունման ուղղությամբ,

Ներպետական հիվանդությունների միջազգային դասակարգիչը համապատասխանեցնել ՀՄԴ-11-ին,

«Արմեդ» համակարգում անհասանելի դարձնել անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին տվյալները,

ՀՀ Քրեական օրենսգրքի 203-րդ, 329-րդ և 330-րդ հոդվածներում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը համապատասխանաբար ներառել որպես խտրականության պաշտպանված հատկանիշ, ատելության հրապարակային հայտարարության և բռնություն գործադրելու հրապարակային կոչի, սպառնալիքի շարժառիթ,

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1 հոդվածում որպես խտրականության պաշտպանված հատկանիշ ներառել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը,

Ձեռնարկել գործուն և արդյունավետ քայլեր՝ ուղղված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրույթները համապատասխան մարմինների կողմից իրականացնելուն:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

NEW GENERATION
HUMANITARIAN NGO

ՏԱՐԵԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ 2023

Ուղեցույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին:
Բոլոր իրավունքները պահպանված են ©NGNGO 2023թ.
© «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

contact@ngngo.net
www.ngngo.net

+374 60478989
+374 55478980

© 2023. The guide was published by New Generation Humanitarian NGO
© 2023. Designed by New Generation Humanitarian NGO